

*ՆԱԽԱԳԱՀԻՆ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՊԱՏԳԱՍՐ*

2011 տարուան սեմին, երբ յուսալի ակնկալություններով կը պատրաստուինք դիմագրաւելու մեր ժամանակներու բազմադրուագ եւ հետաքրքրական հոլովոյթներն ու հրամայականները, կը փափաքիմ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հաւատաւոր անդամներուն, բարերարներուն, նուիրատուներուն եւ բարեկամներուն փոխանցել խաղաղ, առողջ եւ բարօր Նոր Տարուան մը սրտաբուխ մաղթանքներս:

Գոհունակութեամբ կը հաստատեմ, որ 2010-ը եղաւ արդիւնաւոր գործունէութեան նոր ու պատուաբեր հանգրուան մը Հ.Բ.Ը.Միութեան ազգանուէր ծառայութեան եւ իրագործումներու ժամանակագրութեան մէջ: Գործունէայ մասնաճիւղերու բազմաբնոյթ ձեռնարկներով, մեր դպրոցներու յաջողություններով եւ երկրորդականէ բարձրագոյն ուսման անցնող բազմահարիւր փայլուն շրջանաւարտներով, աշխարհատարած Երիտասարդ Արհեստավարժներու ընդարձակուող գործունէութեամբ եւ Սփիւռքի, Հայաստանի ու Արցախի մէջ Միութեան բարեսիրական, ընկերային, մշակութային, կրթական եւ երիտասարդական շարունակուող ծրագիրներով ու նոր նախաձեռնություններով:

Անցնող տարին յատկանշուեցաւ նաեւ Հ.Բ.Ը.Մ.ի 86-րդ Ընդհանուր Ժողովի կայացմամբ Պուէնսու Այրէսի մէջ: Համագումարը առիթ հանդիսացաւ դրսեւորելու Միութեան Հայրենակեդրոն ծաւալուն գործունէութիւնը, որուն մաս կը կազմեն Հայաստանի Ամերիկեան Համալսարանը եւ Հայկական Համացանցային Գոլէճը, ինչպէս նաեւ երիտասարդութեան կարողականութիւնը Միութեան նպատակներու իրագործումին լծելու առաջնահերթ կողմնորոշումը: Սփիւռքի տարածքին կազմաւորուող նոր համայնքները եւ նոր մասնաճիւղերու ստեղծումը, որոնք խրախուսիչ զարգացումներ են, կարիքը ունին մեր միջոցներուն եւ օժանդակութեան: Հետեւաբար անհրաժեշտ է որ Միութեան յատկապէս արեւմտեան շրջաններու կազմաւորուած մասնաճիւղերը իբր ինքնաբաւ կառոյցներ, իրենց ներդրումը բերեն մեր համամիութենական ընդարձակուող նախաձեռնություններուն:

Նիւ Եորքի, Փարիզի, Երեւանի եւ Մոսկուայի նորագոյն Ամառնային Ասպարէզային Փորձառութեան ծրագիրներուն մասնակցող քանի մը տասնեակ երիտասարդներ եւ երիտասարդուհիներ միացան երիտասարդ արհեստավարժներու շարքերուն, որոնք կը շարունակեն ընդլայնիլ յատկապէս Եւրոպայի մէջ, ուր Միութեան շրջանակային յանձնաժողովը շարունակեց իր շեշտակի գործունէութիւնը Նուպարեան Մատենադարանի եւ այլ քաղաքական եւ գիտահետազօտական հաստատություններու գործակցութեամբ, միջազգային քաղաքական գիտաժողովներու ընթացքին առաջնահերթ ուշադրութեան առարկայ դարձնելով հայկական հիմնահարցերը:

Երիտասարդ Արհեստավարժներու խումբերը իրենց ձեռնարկատիրական, ընկերային եւ ծանօթացումի հաւաքոյթներու ընթացքին գոյացած հասոյթներով նկատառելի ներդրումներ կատարեցին Հայաստանի եւ Արցախի յատուկ ծրագիրներուն: Մեր խնամակալական եւ ընկերային

# AGBU

Ծառայութեան ընդարձակուած ծրագիրները շարունակեցին օգտակար հանդիսանալ աւելի մեծ թիւով անհատներու: Հ.Բ.Ը.Մ.ի բարձրագոյն ուսման կրթաթոշակները, իրենց մասնայատուկ ուղղուածութեամբ, օժանդակեցին բազմահարիւր տաղանդաւոր ուսանողներու՝ կատարողական արուեստներու, մասնագիտական ճիւղերու, որոնց շարքին նաեւ հոգեւորականներու պատրաստութեան եւ հանրային ծառայութեան մարզերու մէջ: Համոզուած ենք որ կարելոր է մեր միջոցները առաւել չափով ուղղել նման ծրագիրներու, որոնք կը մշակեն յառաջադէմ եւ հանրային առաջնորդ դիրքեր գրաւելու ատակ նախաձեռնող տիպարներ: Հայկական Համացանցային Գոլէճը շարունակեց մշակել իր լեզուի եւ մշակոյթի ծրագիրները, իր ուսուցողական միջոցները տրամադրելով աշխարհի հեռաւոր անկիւններէն բազմահարիւր ուսանողներու եւ տասնեակ մը դպրոցներու:

Միութեան անշեղ նպատակներով կողմնորոշուած, մենք մեր հայացքը ուղղած ենք ապագային, մեր ճիգերը հետեւողականօրէն կեդրոնացնելով երիտասարդութեան եւ մեր ազգային գոյութեան հիմքերը կազմող Մայր Հայրենիքին, Ապրող Մշակոյթին եւ Մայր եկեղեցիին վրայ:

Հ.Բ.Ը.Միութեան անցեալ տասնամեակներու հզօր եւ պանծալի ուղին մեզ կը ներշնչէ ինքնավստահութեամբ եւ միակամ դիմագրաւելու 2011-ը, յատկանշական նոր իրագործումներ ձեռք բերելու աշխատունակ տրամադրութեամբ:

Լաւագոյն Մաղթանքներով՝



Պերճ Ստեղրակեան

Նախագահ

1 Յունուար 2011